ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» հոկտեմբերի 2012թ. N ___ -Ն

## ՈՐՈՇՈՒՄ

## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 356-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, 73-րդ հոդվածի 1-ին մասի 24–րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի $28^2$-րդ հոդվածի 2-րդ կետի գ) ենթակետով, 33-րդ հոդվածի 4-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 13-ի «Երևան քաղաքի վարչական տարածքում գտնվող՝ պետական սեփականություն համարվող անշարժ գույքի մասնավորեցումից ստացված միջոցների տնօրինման ծրագրին հավանություն տալու մասին» N 1164-Ա, 2012 թվականի սեպտեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեում վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի N 1919-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 1176-Ն, 2012 թվականի օգոստոսի 9-ի «Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեում վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի N 1919-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 1019-Ն և 2012 թվականի սեպտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարությանը գումար հատկացնելու և Հայաստանի Հանրապետության կառավարության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի N 1919-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» N 1231-Ն որոշումները՝

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի 2012 թվականի բյուջեի մասին» N 356-Ն որոշմամբ հաստատված.

   1) եկամուտների գումարն ավելացնել 40,531.0 հազար դրամով,
   2) ծախսերի գումարն ավելացնել 165,855.0 հազար դրամով,
   3) դեֆիցիտի (պակասուրդի) գումարն ավելացնել 125,324.0 հազար դրամով։

2. Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի 2012 թվականի բյուջեի մասին» N 356-Ն որոշմամբ հաստատված NN 2-7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն սույն որոշման համապատասխանաբար NN 1-6 հավելվածների։

3. Սահմանել սույն որոշման 7-րդ հավելվածի 09 բաժնի, 06 խմբի, 01 դասի «3. Դպրոցների ջեռուցման համակարգերի կառուցում և վերանորոգում» ծրագրով նախատեսված 1,300,000.0 հազար դրամ գումարի բաշխումն ըստ օբյեկտների՝ համաձայն սույն որոշմամբ սահմանված N 8 հավելվածի։

4. Սահմանել, որ սույն որոշման 3-րդ կետով հատկացված գումարների շրջանակներում աշխատանքների ձեռք բերումն իրականացվում է բանակցային ընթացակարգով՝ առանց գնումների մասին հայտարարությունը նախապես հրապարակելու՝ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով նախատեսված ընթացակարգով։

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

# ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 356-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 23-ի N 356-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծով (այսուհետ՝ նախագիծ) նախատեսվում է Երևան քաղաքի 2012 թվականի բյուջեում իրականացնել հետևյալ փոփոխությունները.

- Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի օգոստոսի 10-ի N 473-Ա որոշմամբ հավանության է արժանացել «Երևան քաղաքում գտնվող պետական՝ սեփականություն համարվող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից ստացված միջոցների հաշվին Երևան քաղաքի Տիտոգրադյան փողոցի հիմնանորոգման» ծրագիրը։

  Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 27-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքում գտնվող՝ պետական սեփականություն համարվող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից ստացվող միջոցների տնօրինման կարգը հաստատելու մասին» N 1098-Ն որոշման համաձայն ծրագիրը ներկայացվել է ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ՀՀ կառավարությունում քննարկման ներկայացնելու համար։

  Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի $28^2$-րդ հոդվածի 2-րդ կետի գ) ենթակետի ՀՀ կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 13-ի N 1164-Ա որոշմամբ համաձայնություն է տրվել «Երևան քաղաքում գտնվող պետական՝ սեփականություն համարվող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների

մասնավորեցումից ստացված միջոցների հաշվին Երևան քաղաքի Տիտոգրադյան փողոցի հիմնանորոգման» ծրագրին։

Հաշվի առնելով նշվածը և այն, որ հատկացված միջոցները հանդիսանում են Երևան քաղաքի բյուջեի համար դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուր՝ ներկայացված նախագծով առաջարկվում է դեֆիցիտի գումարը ավելացնել 125,324.0 հազար դրամով, իսկ ծախսային մասում այն ավելացնել «Մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում» ծրագրին։

- Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 13-ի N 1176-Ն որոշման համաձայն Երևանի մետրոպոլիտենի աշխատանքների կազմակերպման ընթացքում վճարովի ուղևորափոխադրումներից կանխատեսվող մուտքերը չապահովվելու հետ կապված առաջացած ֆինանսական ճեղքվածքը ֆինանսավորելու նպատակով ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից 240,000.0 հազար դրամ հատկացվել է Երևան քաղաքի 2012 թվականի բյուջեի «Երևանի մետրոպոլիտենի աշխատանքների կազմակերպում (պատվիրակված լիազորություններ)» ծրագրին։

Փոփոխության արդյունքում ակնկալվում է Երևան քաղաքի 2012 թվականի բյուջեի վարչական մասի եկամուտները և ծախսերն ավելացնել համապատասխանաբար 240,000.0 հազար դրամով։

- Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի օգոստոսի 9-ի N 1019-Ն որոշման համաձայն Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեից, մասնավորապես Երևան քաղաքի 2012 թվականի բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 04 բաժնի 05 խմբի 01 դասի «10. Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագիր (պատվիրակված լիազորություններ)» և 06 բաժնի 03 խմբի 01 դասի «2. Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրին տրամադրվող տեխնիկական աջակցության ծրագիր (պատվիրակված լիազորություններ)» ծրագրերից համապատասխանաբար նվազեցվել է 1,159,049.2 և 340,419.8 հազար դրամ։

Նշված փոփոխության արդյունքում նախատեսվում է Երևան քաղաքի 2012 թվականի բյուջեի վարչական մասի եկամուտները և ծախսերը նվազեցնել համապատասխանաբար 1,499,469.0 հազար դրամով։

- Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 27-ի N 1231-Ն որոշման համաձայն Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեի պահուստային ֆոնդից 1,300,000.0 հազար դրամ որպես կապիտալ սուբվենցիա հատկացվել է ՀՀ տարածքային կառավարման նախարարությանը Երևանի քաղաքապետարանին տրամադրելու համար: Որոշման համաձայն գումարն ուղղվելու է Երևան քաղաքի չջեռուցվող հիմնական, ավագ և հատուկ դպրոցները ջեռուցման համակարգերով ապահովելու նպատակին, որի արդյունքում մինչև տարեվերջ թվով 36 դպրոցներ կապահովվեն լիարժեք գործող ջեռուցման համակարգերով և նշված դպրոցներում դասապրոցեսը կգործի առանց խաթարումների: Ներկայումս Երևանի քաղաքապետարանի կողմից իրականացվում է Երևան քաղաքի բոլոր չջեռուցվող կրթական, մշակութային, նախադպրոցական հաստատությունները և գրադարանները ջեռուցման համակարգերով ապահովելու լայնամասշտաբ ծրագրեր, մասնավորապես նախորդ 2 տարիների ընթացքում իրականացվել են Երևան քաղաքի բոլոր նախադպրոցական հաստատությունները ջեռուցման լոկալ համակարգերով ապահովելու ծրագիրը, ներկայումս իրականցվում է արվեստի և երաժշտական որոշ դպրոցների, ինչպես նաև գրադարանների ջեռուցման համակարգերի ներդրման աշխատանքներ: Նախագծի ընդունմամբ Երևան քաղաքում չջեռուցվող դպրոցներ չեն լինի:

Փոփոխության արդյունքում ակնկալվում է Երևան քաղաքի 2012 թվականի բյուջեի ֆոնդային մասի եկամուտները և ծախսերը ավելացնել 1,300,000.0 հազարական դրամով:

Նախագծով առաջարկվող բոլոր փոփոխությունների արդյունքում նախատեսվում է եկամուտների գումարն ավելացնել 40,531.0 հազար դրամով, ծախսերի գումարը՝ 165,855.0 հազար դրամով, դեֆիցիտի գումարը՝ 125,324.0 հազար դրամով:

Ելնելով վերոգրյալից Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում «Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 23-ի N 356-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

## ՏԵՂԵԿԱՆՔ N 1

## «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 356-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 23-ի N 356-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

## ՏԵՂԵԿԱՆՔ N 2

## «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 356-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 23-ի N 356-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման արդյունքում Երևանի քաղաքի 2012 թվականի բյուջեի եկամուտները ավելանում են 40,531.0 հազար դրամով, ծախսերի գումարը՝ 165,855.0 հազար դրամով, դեֆիցիտը՝ 125,324.0 հազար դրամով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված N 1
Երևան քաղաքի ավագանու
2012 թվականի_____-ի
N _____ - Ն որոշման

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 356-Ն ՈՐՈՇՄԱՆ N 1 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*(հազար դրամներով)*

| Տողի NN | Եկամտատեսակները | Հոդվածի NN | Ընդամենը | *այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)* | |
|---|---|---|---|---|---|
| | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| **1000** | **ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ** | | **40,531.0** | **(1,259,469.0)** | **1,300,000.0** |
| | այդ թվում՝ | | | | |
| **1200** | **2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ** | **7300** | **1,300,000.0** | **-** | **1,300,000.0** |
| | այդ թվում՝ | | | | |
| **1260** | **2.6 Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից** | **7332** | **1,300,000.0** | **-** | **1,300,000.0** |
| | այդ թվում՝ | | | | |
| 1261 | ա) Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) | | 1,300,000.0 | - | 1,300,000.0 |
| **1300** | **3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ** | **7400** | **(1,259,469.0)** | **(1,259,469.0)** | **-** |
| | այդ թվում՝ | | | | |
| **1340** | **3.4 Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից** | **7421** | **(1,259,469.0)** | **(1,259,469.0)** | **-** |
| | այդ թվում՝ | | | | |
| 1342 | Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ | | (1,259,469.0) | (1,259,469.0) | - |

Հավելված N 2
Երևան քաղաքի ավագանու
2012 թվականի_____-ի
N _____-Ն որոշման

# ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 356-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*(հազար դրամներով)*

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները | Ընդամենը | այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում) | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| | | | | **ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ** | **165,855.0** | **(1,259,469.0)** | **1,425,324.0** |
| 2400 | **04** | **0** | **0** | **ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | **(793,725.2)** | **(919,049.2)** | **125,324.0** |
| | | | | այդ թվում՝ | | | |
| 2450 | **04** | **5** | **0** | ***Տրանսպորտ*** | **(793,725.2)** | **(919,049.2)** | **125,324.0** |
| | | | | որից՝ | | | |
| 2451 | 04 | 5 | 1 | ճանապարհային տրանսպորտ | (1,033,725.2) | (1,159,049.2) | 125,324.0 |
| 2455 | 04 | 5 | 5 | Խողովակաշարային և այլ տրանսպորտ | 240,000.0 | 240,000.0 | - |
| 2600 | **06** | **0** | **0** | **ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ** | **(340,419.8)** | **(340,419.8)** | **-** |
| | | | | այդ թվում՝ | | | |
| 2630 | **06** | **3** | **0** | ***Ջրամատակարարում*** | **(340,419.8)** | **(340,419.8)** | **-** |
| | | | | որից՝ | | | |
| 2631 | 06 | 3 | 1 | Ջրամատակարարում | (340,419.8) | (340,419.8) | - |
| 2900 | **09** | **0** | **0** | **ԿՐԹՈՒԹՅՈՒՆ** | **1,300,000.0** | **-** | **1,300,000.0** |
| | | | | այդ թվում՝ | | | |
| 2960 | **09** | **6** | **0** | ***Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ*** | **1,300,000.0** | **-** | **1,300,000.0** |
| | | | | որից՝ | | | |
| 2961 | 09 | 6 | 1 | Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ | 1,300,000.0 | - | 1,300,000.0 |

Հավելված N 3
Երևան քաղաքի ավագանու
2012 թվականի_____-ի
N _____-Ն որոշման

# ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 356-Ն ՈՐՈՇՄԱՆ N 3 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*(հազար դրամներով)*

| Տողի NN | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | NN | Ընդամենը | *այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)* | |
|---|---|---|---|---|---|
| | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 4000 | **ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ** | | **165,855.0** | **(1,259,469.0)** | **1,425,324.0** |
| | այդ թվում՝ | | | | |
| 4050 | **Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ[1]** | x | **(1,259,469.0)** | **(1,259,469.0)** | **-** |
| | այդ թվում՝ | | | | |
| 4400 | **1.4 ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ** | x | **240,000.0** | **240,000.0** | **-** |
| | այդ թվում՝ | | | | |
| 4410 | ***ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ (ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ*** | x | 240,000.0 | 240,000.0 | - |
| | որից՝ | | | | |
| 4411 | -Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին | 4511 | 240,000.0 | 240,000.0 | - |
| 4700 | ***1.7 ԱՅԼ ԾԱԽՍԵՐ*** | x | **(1,499,469.0)** | **(1,499,469.0)** | **-** |
| | այդ թվում՝ | | | | |
| 4760 | ***ԱՅԼ ԾԱԽՍԵՐ*** | x | **(1,499,469.0)** | **(1,499,469.0)** | **-** |
| | որից՝ | | | | |
| 4761 | -Այլ ծախսեր | 4861 | (1,499,469.0) | (1,499,469.0) | - |
| 5000 | **Բ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ** | x | **1,425,324.0** | **-** | **1,425,324.0** |
| | այդ թվում՝ | | | | |
| 5100 | **1.1. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ** | x | **1,425,324.0** | **-** | **1,425,324.0** |
| | այդ թվում՝ | | | | |
| 5110 | ***ՇԵՆՔԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ*** | x | 1,425,324.0 | - | 1,425,324.0 |
| | որից՝ | | | | |
| 5113 | - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 5113 | 1,425,324.0 | **-** | 1,425,324.0 |

Հավելված N 4
Երևան քաղաքի ավագանու
2012 թվականի _____-ի
N _____-Ն որոշման

## ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 356-Ն ՈՐՈՇՄԱՆ N 4 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*(հազար դրամներով)*

| Տողի NN | | Ընդամենը | այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում) | |
|---|---|---|---|---|
| | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 8000 | ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱՎԵԼՈՒՐԴԸ ԿԱՄ ԴԵՖԻՑԻՏԸ (ՊԱԿԱՍՈՒՐԴԸ) | (125,324.0) | - | (125,324.0) |

Հավելված N 5
Երևան քաղաքի ավագանու
2012 թվականի_____-ի
N _____-Ն որոշման

## ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 356-Ն ՈՐՈՇՄԱՆ N 5 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*(հազար դրամներով)*

| Տողի NN | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | NN | Ընդամենը | այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում) | |
|---|---|---|---|---|---|
| | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 8010 | **ԸՆԴԱՄԵՆԸ՝** | | **125,324.0** | **-** | **125,324.0** |
| | այդ թվում՝ | | | | |
| 8100 | **Ա. ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ** | | 125,324.0 | - | 125,324.0 |
| | այդ թվում՝ | | | | |
| 8160 | ***2. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ*** | | 125,324.0 | - | 125,324.0 |
| | այդ թվում՝ | | | | |
| **8161** | **2.1. Բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն** | | 125,324.0 | - | 125,324.0 |
| | որից՝ | | | | |
| 8163 | *- իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից առաջացած միջոցներից համայնքի բյուջե մասհանումից մուտքեր* | 9213 | 125,324.0 | - | 125,324.0 |

Հավելված N 6
Երևան քաղաքի ավագանու
2012 թվականի_____-ի
N _____-Ն որոշման

# ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 356-Ն ՈՐՈՇՄԱՆ N 6 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*(հազար դրամներով)*

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Հոդված NN | Ընդամենը | այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում) | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| | | | | **ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ** | | **165,855.0** | **(1,259,469.0)** | **1,425,324.0** |
| 2400 | **04** | **0** | **0** | **ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | **(793,725.2)** | **(919,049.2)** | **125,324.0** |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| 2450 | **04** | **5** | **0** | ***Տրանսպորտ*** | | **(793,725.2)** | **(919,049.2)** | **125,324.0** |
| | | | | որից՝ | | | | |
| 2451 | 04 | 5 | 1 | ճանապարհային տրանսպորտ | | (1,033,725.2) | (1,159,049.2) | 125,324.0 |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| | | | | ***8. Մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում*** | | ***125,324.0*** | ***-*** | ***125,324.0*** |
| | | | | - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 5113 | 125,324.0 | - | 125,324.0 |
| | | | | ***10. Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագիր (պատվիրակված լիազորություններ)*** | | ***(1,159,049.2)*** | ***(1,159,049.2)*** | ***-*** |
| | | | | -Այլ ծախսեր | 4861 | (1,159,049.2) | (1,159,049.2) | - |
| 2455 | 04 | 5 | 5 | Խողովակաշարային և այլ տրանսպորտ | | 240,000.0 | 240,000.0 | - |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| | | | | ***2. Երևանի մետրոպոլիտենի աշխատանքների կազմակերպում (պատվիրակված լիազորություններ)*** | | ***240,000.0*** | ***240,000.0*** | ***-*** |
| | | | | -Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին | 4511 | 240,000.0 | 240,000.0 | - |
| 2600 | **06** | **0** | **0** | **ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ** | | **(340,419.8)** | **(340,419.8)** | **-** |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| 2630 | **06** | **3** | **0** | ***Ջրամատակարարում*** | | **(340,419.8)** | **(340,419.8)** | **-** |
| | | | | որից՝ | | | | |
| 2631 | 06 | 3 | 1 | Ջրամատակարարում | | (340,419.8) | (340,419.8) | - |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| | | | | ***2. Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրին տրամադրվող տեխնիկական աջակցության ծրագիր (պատվիրակված լիազորություններ)*** | | ***(340,419.8)*** | ***(340,419.8)*** | ***-*** |
| | | | | -Այլ ծախսեր | 4861 | (340,419.8) | (340,419.8) | - |
| 2900 | **09** | **0** | **0** | **ԿՐԹՈՒԹՅՈՒՆ** | | **1,300,000.0** | **-** | **1,300,000.0** |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| 2960 | **09** | **6** | **0** | ***Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ*** | | **1,300,000.0** | **-** | **1,300,000.0** |
| | | | | որից՝ | | | | |
| 2961 | 09 | 6 | 1 | Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ | | 1,300,000.0 | - | 1,300,000.0 |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| | | | | ***3. Դպրոցների ջեռուցման համակարգերի կառուցում և վերանորոգում*** | | ***1,300,000.0*** | ***-*** | ***1,300,000.0*** |
| | | | | - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 5113 | 1,300,000.0 | - | 1,300,000.0 |

Հավելված N 7
Երևան քաղաքի ավագանու
2012 թվականի_____-ի
N _____-Ն որոշման

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 356-Ն ՈՐՈՇՄԱՆ N 7 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1
ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*(հազար դրամներով)*

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Հոդված NN | Ընդամենը | այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում) | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| | | | | **ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ** | | **165,855.0** | **(1,259,469.0)** | **1,425,324.0** |
| 2400 | **04** | **0** | **0** | **ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | **(793,725.2)** | **(919,049.2)** | **125,324.0** |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| 2450 | **04** | **5** | **0** | ***Տրանսպորտ*** | | **(793,725.2)** | **(919,049.2)** | **125,324.0** |
| | | | | որից՝ | | | | |
| 2451 | 04 | 5 | 1 | ճանապարհային տրանսպորտ | | (1,033,725.2) | (1,159,049.2) | 125,324.0 |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| | | | | ***8. Մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում*** | | ***125,324.0*** | ***-*** | ***125,324.0*** |
| | | | | - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 5113 | 125,324.0 | - | 125,324.0 |
| | | | | ***10. Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագիր (պատվիրակված լիազորություններ)*** | | ***(1,159,049.2)*** | ***(1,159,049.2)*** | ***-*** |
| | | | | -Այլ ծախսեր | 4861 | (1,159,049.2) | (1,159,049.2) | - |
| 2455 | 04 | 5 | 5 | Խողովակաշարային և այլ տրանսպորտ | | 240,000.0 | 240,000.0 | - |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| | | | | ***2. Երևանի մետրոպոլիտենի աշխատանքների կազմակերպում (պատվիրակված լիազորություններ)*** | | ***240,000.0*** | ***240,000.0*** | ***-*** |
| | | | | -Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին | 4511 | 240,000.0 | 240,000.0 | - |
| 2600 | **06** | **0** | **0** | **ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ** | | **(340,419.8)** | **(340,419.8)** | **-** |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| 2630 | **06** | **3** | **0** | ***Ջրամատակարարում*** | | **(340,419.8)** | **(340,419.8)** | **-** |
| | | | | որից՝ | | | | |
| 2631 | 06 | 3 | 1 | Ջրամատակարարում | | (340,419.8) | (340,419.8) | - |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| | | | | ***2. Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրին տրամադրվող տեխնիկական աջակցության ծրագիր (պատվիրակված լիազորություններ)*** | | ***(340,419.8)*** | ***(340,419.8)*** | ***-*** |
| | | | | -Այլ ծախսեր | 4861 | (340,419.8) | (340,419.8) | - |
| 2900 | **09** | **0** | **0** | **ԿՐԹՈՒԹՅՈՒՆ** | | **1,300,000.0** | **-** | **1,300,000.0** |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| 2960 | **09** | **6** | **0** | ***Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ*** | | **1,300,000.0** | **-** | **1,300,000.0** |
| | | | | որից՝ | | | | |
| 2961 | 09 | 6 | 1 | Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ | | 1,300,000.0 | - | 1,300,000.0 |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| | | | | ***3. Դպրոցների ջեռուցման համակարգերի կառուցում և վերանորոգում*** | | ***1,300,000.0*** | ***-*** | ***1,300,000.0*** |
| | | | | - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 5113 | 1,300,000.0 | - | 1,300,000.0 |

Հավելված N 8
Երևան քաղաքի ավագանու
2012 թվականի_____-ի
N _____-Ն որոշման

**Երևան քաղաքի չջեռուցվող հիմնական, ավագ և հատուկ դպրոցների ջեռուցման համակարգերի կառուցման և վերանորոգման աշխատանքներ**

| Հ/Հ | Աշխատանքների անվանումը | Գումարը (հազար դրամներով) |
|---|---|---|
| | **ԸՆԴԱՄԵՆԸ, այդ թվում՝** | **1,300,000.0** |
| 1 | Երևանի թիվ 102 դպրոցի կաթսայատան և ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքներ | 46,028.1 |
| 2 | Երևանի թիվ 108 դպրոցի կաթսայատան և ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքներ | 50,570.3 |
| 3 | Երևանի թիվ 146 դպրոցի կաթսայատան և ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքներ | 54,721.0 |
| 4 | Երևանի թիվ 133 դպրոցի կաթսայատան և ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքներ | 67,378.5 |
| 5 | Երևանի թիվ 107 դպրոցի կաթսայատան և ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքներ | 26,592.2 |
| 6 | Երևանի թիվ 81 դպրոցի կաթսայատան և ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքներ | 22,768.0 |
| 7 | «Հակոբ Կոջոյան» կրթահամալիրի կաթսայատան և ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքներ | 33,289.3 |
| 8 | Երևանի թիվ 31 դպրոցի կաթսայատան և ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքներ | 43,240.5 |
| 9 | Երևանի թիվ 66 դպրոցի կաթսայատան և ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքներ | 60,193.3 |
| 10 | Երևանի թիվ 163 դպրոցի կաթսայատան և ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքներ | 68,909.5 |
| 11 | Երևանի թիվ 134 դպրոցի կաթսայատան և ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքներ | 35,210.9 |
| 12 | Երևանի թիվ 144 դպրոցի կաթսայատան և ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքներ | 51,322.8 |
| 13 | Երևանի թիվ 120 դպրոցի կաթսայատան և ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքներ | 37,511.5 |
| 14 | Երևանի թիվ 157 դպրոցի կաթսայատան և ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքներ | 53,653.0 |
| 15 | Երևանի թիվ 23 դպրոցի կաթսայատան և ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքներ | 37,461.8 |
| 16 | «Օլիմպոս» հատուկ կրթահամալիրի կաթսայատան վերանորոգման և ջեռուցման համակարգի իրագործման աշխատանքներ | 75,646.7 |
| 17 | Երևանի Գ. Էմինի անվան թիվ 182 դպրոցի կաթսայատան և ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքներ | 45,499.3 |
| 18 | Երևանի թիվ 40 դպրոցի կաթսայատան և ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքներ | 38,671.5 |
| 19 | Երևանի թիվ 34 դպրոցի կաթսայատան և ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքներ | 37,211.8 |
| 20 | Վ. Թեքեյանի անվան թիվ 92 դպրոցի կաթսայատան վերանորոգման և ջեռուցման համակարգի իրագործման աշխատանքներ | 34,946.3 |
| 21 | Երևանի Լեոյի անվան թիվ 65 դպրոցի կաթսայատան և ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքներ | 45,943.7 |
| 22 | Երևանի Տ. Շևչենկոյի անվան թիվ 42 դպրոցի կաթսայատան և ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքներ | 49,815.0 |
| 23 | Երևանի թիվ 159 դպրոցի մասնաշենքերի ջեռուցման համակարգերի իրագործման աշխատանքներ | 30,876.9 |

| Հ/Հ | Աշխատանքների անվանումը | Գումարը (հազար դրամներով) |
|---|---|---|
| 24 | Երևանի Խ. Աբովյանի անվան թիվ 2 դպրոցի ջեռուցման ներքին ցանցի վերանորոգման աշխատանքներ | 9,963.5 |
| 25 | Երևանի թիվ 21 դպրոցի ջեռուցման համակարգի վերանորոգման աշխատանքներ | 13,900.5 |
| 26 | Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրի ջեռուցման ներքին ցանցի վերանորոգման աշխատանքներ | 17,759.4 |
| 27 | Երևանի թիվ 170 ավագ դպրոցի ջեռուցման ներքին ցանցի վերանորոգման աշխատանքներ | 1,713.5 |
| 28 | Երևանի բժշկահոգեբանական-մանկավարժական գնահատման կենտրոնի կաթսայատան և ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքներ | 29,154.8 |
| 29 | Երևանի թիվ 16 հատուկ դպրոցի կաթսայատան և ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքներ | 33,562.0 |
| 30 | Հանրապետական հ. 2 հատուկ կրթահամալիրի կաթսայատան և ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքներ | 69,878.6 |
| 31 | Երևանի թիվ 138 դպրոցի կաթսայատան վերազինման աշխատանքներ | 1,213.1 |
| 32 | Հր. Մաթևոսյանի անվան դպրոցի կաթսայատան վերազինման աշխատանքներ | 2,251.1 |
| 33 | Երևանի թիվ 175 դպրոցի կաթսայատան էլեկտրամատակարարման վերանորոգման աշխատանքներ | 2,189.5 |
| 34 | Երևանի երաժշտական թիվ 13 հատուկ դպրոցի կաթսայատան և ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքներ | 63,024.1 |
| 35 | Երևանի թիվ 109 ավագ դպրոցի ջեռուցման համակարգի վերանորոգման աշխատանքներ | 2,698.2 |
| 36 | Երևանի Մխիթար Սեբաստացի կրթահամալիրի ջեռուցման համակարգի վերանորոգման աշխատանքներ | 5,229.8 |